ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 516-Լ	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Հրապարակվել է 22.07.2024	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ փոխվարչապետ	*Ընդունման ամսաթիվը*	22.07.2024
Ստորագրող մարմինը	ՀՀ փոխվարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	22.07.2024
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	23.07.2024	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՄԵԴԱԼԻ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 516-Լ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՄԵԴԱԼԻ ԵՎ ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էկոպարեկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը՝

1. Հաստատել էկոպարեկային ծառայողի մեդալի և կրծքանշանի տեսակները, ձևերը և դրանց շնորհման կարգը՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:
2. Սույն որոշմամբ սահմանված մեդալների և կրծքանշանների աստիճանակարգությունը որոշվում է ըստ սույն որոշման հավելվածներով սահմանված հերթականության:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ **Տ. Խաչատրյան**

Երևան

22.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ փոխվարչապետի
N 516-Լ որոշման

«ՊԱՏՎԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՂ» ՄԵԴԱԼԻ ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Պատվավոր ծառայող» մեդալը (ձևը կցվում է) շնորհվում է էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ ծառայություն) զարգացման գործում նշանակալի ավանդ ունեցող, խախտումների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցած էկոպարեկային ծառայողներին, որոնց ջանքերի և անմիջական մասնակցության շնորհիվ կանխվել են բնությանը սպառնացող ռիսկերը, ցուցաբերվել է համագործակցության և ժամանակին արձագանքելու վառ օրինակ:

2. «Պատվավոր ծառայող» մեդալն իրենից ներկայացնում է 45 մմ տրամագծով ոսկեգույն շրջանակ, որի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Զինանշանի վերևի հատվածում գրված են «ՊԱՏՎԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՂ», իսկ ներքևի հատվածում՝ «ԷՊԾ» բառերը:

3. «Պատվավոր ծառայող» մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30 x 45 մմ չափսերով, վրայից ուղղանկյունաձև շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչը կարմիր է՝ 2 ուղղահայաց 7 մմ լայնությամբ կապույտ գոլակներով, որոնք կախիչի եզրագծերից ունեն 3 մմ հեռավորություն:

4. «Պատվավոր ծառայող» մեդալի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» և «ECOPATROL SERVICE» բառերը: Մեդալը դարձերեսից համարակալված է:

5. «Պատվավոր ծառայող» մեդալը շնորհում է ծառայության պետը: «Պատվավոր ծառայող» մեդալի հետ տրվում է վկայական:

Ձև

«Պատվավոր ծառայող» մեդալի

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Տ. Խաչատրյան

22.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ փոխվարչապետի
N 516-Լ որոշման

«ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵԴԱԼԻ ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի, երկրորդ աստիճանի և երրորդ աստիճանի մեդալներով (ձևերը կցվում են) պարգևատրվում են ծառայողական պարտականությունները բարեխիղճ կատարած և մասնագիտական բարձր որակներ ցուցաբերած այն ծառայողները, որոնց ծառայության ստաժն օրացուցային հաշվարկով կազմում է համապատասխանաբար առնվազն 20, 15 և 10 տարի:

2. «Անբասիր ծառայության համար» մեդալն իրենից ներկայացնում է 42 մմ տրամագիծ ունեցող ոսկեգույն ութաթև աստղանման սկավառակ: Մեդալի կենտրոնում 25 մմ տրամագծով շրջանաձև վահանի վրա պատկերված է արևախաչի նշանը, որի վրա գրված են ծառայության տարիները՝ «20», «15», «10»: Վահանի եզրագծի վերևի մասում գրված են «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ», իսկ ներքևի մասում՝ «ԷՊԾ» բառերը:

3. «Անբասիր ծառայության համար» մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30 X 45 մմ չափսերով, վրայից ուղղանկյունաձև շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ:

4. «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի մեդալի՝

1) կախիչը կանաչ է, որի կենտրոնով իրարից 2 մմ հեռավորությամբ անցնում են չորս ուղղահայաց 2 մմ լայնությամբ դեղին զոլակներ.

2) մեդալը ոսկեգույն է, կենտրոնում ութաթև աստղի վրա գրված է «20» թիվը, ութաթև ոսկեգույն աստղը գտնվում է կանաչ ֆոնի վրա:

5. «Անբասիր ծառայության համար» երկրորդ աստիճանի մեդալի՝

1) կախիչը կարմիր է, որի կենտրոնով իրարից 2 մմ հեռավորությամբ անցնում են երեք ուղղահայաց 2 մմ լայնությամբ դեղին զոլակներ.

2) մեդալը ոսկեգույն է, կենտրոնում ութաթև աստղի վրա գրված է «15» թիվը, ութաթև ոսկեգույն աստղը գտնվում է կարմիր ֆոնի վրա:

6. «Անբասիր ծառայության համար» երրորդ աստիճանի մեդալի՝

1) կախիչը կապույտ է, որի կենտրոնով իրարից 2 մմ հեռավորությամբ անցնում են երկու ուղղահայաց 2 մմ լայնությամբ դեղին զոլակներ.

2) մեդալը ոսկեգույն է, կենտրոնում ութաթև աստղի վրա գրված է «10» թիվը, ութաթև ոսկեգույն աստղը գտնվում է կապույտ ֆոնի վրա:

7. «Անբասիր ծառայության համար» մեդալի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» և «ECOPATROL SERVICE» բառերը: Մեդալը դարձերեսից համարակալված է:

8. «Անբասիր ծառայության համար» մեդալները շնորհում է էկոպարեկային ծառայության պետը: «Անբասիր ծառայության համար» մեդալների հետ տրվում են վկայականներ:

Ձև

«Անբասիր ծառայության համար» մեդալի

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Տ. Խաչատրյան

22.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 3
ՀՀ փոխվարչապետի
N 516-Լ որոշման

«ԿԱՆԽՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ» ՄԵԴԱԼԻ ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալը (ձևը կցվում է) շնորհվում է իրավախախտումների կանխման, կանխարգելման կամ բացահայտման գործում բարձր ցուցանիշներ դրսևորած էկոպարեկային ծառայողներին:

2. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալն իրենից ներկայացնում է 38 մմ տրամագծով ոսկեգույն շրջանակ, որի կենտրոնում պատկերված է էկոպարեկային ծառայության խորհրդանշանը: Մեդալի եզրագծի վերին մասում գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ԿԱՆԽՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ» բառերը:

3. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30 x 45 մմ չափսերով, վրայից ուղղանկյունաձև շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչը կապույտ է՝ 1 ուղղահայաց 10 մմ լայնությամբ մեջտեղով անցնող ոսկեգույն զոլակով, որի ձախ և աջ եզրագծերից 2 մմ հեռավորությամբ անցնում են կանաչ գույնի 2 մմ լայնությամբ 2 զոլակներ:

4. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալի դարձերեսին հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» և «ECOPATROL SERVICE» բառերը: Մեդալը դարձերեսից համարակալված է:

5. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալը շնորհում է էկոպարեկային ծառայության պետը: «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալի հետ տրվում է վկայական:

Ձև

«Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալի

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Տ. Խաչատրյան

22.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 4
ՀՀ փոխվարչապետի
N 516-Լ որոշման

«ԷԿՈՊԱՐԵԿ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ», «ԷԿՈՊԱՐԵԿ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ» ԵՎ «ԷԿՈՊԱՐԵԿ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ» ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Էկոպարեկ առաջին կարգի», «Էկոպարեկ երկրորդ կարգի» և «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշաններով (ձևերը կցվում են) պարգևատրվում են այն ծառայողները, ովքեր լուծել են ծառայության առջև դրված խնդիրներ, դրսևորել բարձր մասնագիտական կարողություններ:

2. «Էկոպարեկ առաջին կարգի» կրծքանշանը ոսկեգույն է, որի երկարությունը 50 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 42 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Կրծքանշանի կենտրոնում կանաչ ֆոնի վրա պատկերված է էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ ծառայություն) խորհրդանշանը: Խորհրդանշանի վերևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված են «ԷՊԾ ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Կրծքանշանի ներքևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված է «ԷԿՈՊԱՐԵԿ» բառը: Ծառայության խորհրդանշանի և «ԷԿՈՊԱՐԵԿ» բառի միջնամասում նշված է հռոմեական «I» թիվը:

3. «Էկոպարեկ երկրորդ կարգի» կրծքանշանը ոսկեգույն է, որի երկարությունը 50 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 42 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Կրծքանշանի կենտրոնում կանաչ ֆոնի վրա պատկերված է ծառայության խորհրդանշանը: Խորհրդանշանի վերևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված են «ԷՊԾ ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Կրծքանշանի ներքևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված է «ԷԿՈՊԱՐԵԿ» բառը: Ծառայության խորհրդանշանի և «ԷԿՈՊԱՐԵԿ» բառի միջնամասում նշված է հռոմեական «II» թիվը:

4. «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշանը ոսկեգույն է, որի երկարությունը 50 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 42 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Կրծքանշանի կենտրոնում կանաչ ֆոնի վրա պատկերված է ծառայության խորհրդանշանը: Խորհրդանշանի վերևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված են «ԷՊԾ ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Կրծքանշանի ներքևի հատվածում ոսկեգույն ժապավենի վրա գրված է «ԷԿՈՊԱՐԵԿ» բառը: Ծառայության խորհրդանշանի և «ԷԿՈՊԱՐԵԿ» բառի միջնամասում նշված է հռոմեական «III» թիվը:

5. «Էկոպարեկ առաջին կարգի», «Էկոպարեկ երկրորդ կարգի» և «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշանների դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ԷՊԾ» և «EPS» բառերը:

6. «Էկոպարեկ առաջին կարգի», «Էկոպարեկ երկրորդ կարգի» և «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշանները դարձերեսից համարակալված են և ունեն պտուտակային ամրակ՝ հագուստին ամրացնելու համար:

7. Կրծքանշանները շնորհում է ծառայության պետը: Կրծքանշանների հետ տրվում են վկայականներ:

Ձև

«Էկոպարեկ առաջին կարգի», «Էկոպարեկ երկրորդ կարգի» և «Էկոպարեկ երրորդ կարգի» կրծքանշանների

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Տ. Խաչատրյան

22.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ